

որմէ վերջ զագաղը, ծածկուած իւրատունն ծաղկինքերով և միաբան եզրաբոց ծաղկեպսակներով առաջնորդուած, հանդիսիւ տարուեցաւ գերեզմանատուն, ուր սիրելի Հ. Վրթմանէի մասմիւր ամփոփեցաւ Ս. Փրկչի հովանւոյն տակ ի դիրք միաբանից: Տ. Մեծորոպ Ս. Լուսարարացպետը, զգալիբ կը հեռեկը իրբն հանգուցելոյն քաւարայական օծակից եղբայրը:

Յիշատակն արգարոց օրնենա՛ւ եչիցի՛:

ԲԱՐՈՅՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ կ'արձանագրեմք 1938 թուարկ ընթացիկն եղած հետեւեալ բարեպաշտական նուէրները.

1. Ս. Ուխտիտ միաբան Հոգ. Տ. Մուշեղ Վրդ. Լալրապետեան՝ սև թաւիչի վրայ ոսկեթել ըսնուած մէկ զոյգ ժամարարի հողախժափ:
2. Մարաշցի Մկրտիչ և Արշակ Տէյիրմէնեան եղբարք՝ զիզնագոյն պղինձէ ինքնածնագործ մէկ սփռէ Օ,90 X Օ,82 մէզր մեծաթեամբ:
3. Խարթումէն Տիկին Ֆաննի Ֆիլիփ Գարլանեան՝ մէկ ինքնածնագործ սեղանի ծածկոց՝ ըսպիտակ կտուտէ:
4. Ֆիլիպպի Տիկին Արաքսի Յ. Օշական՝ մութ սրճագոյն սնդուսի վրայ մէկ ինքնածնագործ վարագոյր Ս. Աստուածածնի պատկերին համար ի Ս. Յակոբ:
5. Աղեքսանդրաբնակ Տարսնցի Տիկին Մարգարի Պաղտասարեան՝ մէկ սեղանի զարդ ինքնածնագործ:
6. Լարաւային Ամբրիկա քնակեալ Այնթապցի Տիար Գեորգ Գարապէտեան՝ արծաթախառն պահոնէ շինուած մէկ գեղեցիկ կանթեղ՝ շուրջը վեց-թեւեան աշտանակներով և ստորուր մէկ զարդագունտով:
7. Եղեռացի Խաչեր աղա Սէմէրեան՝ մէկ քանալա կորփուրայ, երկու վարագոյր Ս. Գլխազրի՛ զանազան կտորներով կարուած և երկու փոքր վարագոյր:
8. Պաղէքսիբցի Տիկին Սաթնիկ Մարաշլեան՝ մէկ սեղանի ծածկոց՝ սպիտակ սնդուսի վրայ ծաղկերի սակնագործուած:
9. Տիգրանակերտցի Տիկին Մարիամ Ճիզմէնեան՝ մէկ ոսկի ապարանջան:
10. Նիկոսիայէն Տիար Դարապետ Գէջեարեան՝ սպիտակ սեղանու վրայ բուլբուլ ըսնուած մէկ լիկնի ծածկոց:
11. Գահրիբաբնակ Կ. Պոսեցի Տիկին Արաքսի Պարսեան՝ մէկ փոքր պատկեր Ս. Աստուածածնի արծաթալատ, ինքնածնագործ մէկ դիզնագոյն կորփուրայ, երկու աշտանակի զարդ և երեք կըտոր արծաթեալ զարդեր:
12. Կելիպոլցի Տիկին Աղաւնի Հէքիմեան՝ Քրքիտառի Ս. Գերեզմանին համար մէկ ծածկոց վարագործն սնդուսի վրայ ոսկեթել ըսնուած՝

- մէջտեղը Քրիտոսի պատկերով, մէկ շղարշեայ վարագոյր՝ վրան մէկ զարդոսկիով՝ Ս. Աստուածածնի պատկերին համար ի Ս. Յակոբ, և մէկ ինքնածնագործ ծածկոց մասի ափսէին:
13. Աքշէրիբցի Տիկին Վերոնիք Դերմանեան՝ մէկ ինքնածնագործ զբակլոյ ոսկուակ ծածկոց:
14. Ջնքուշցի Տիկին Նազը Տէր Գասպարեան՝ մէկ կարմրագոյն սնդուսի վրայ սիւզենի ըսնուած վարագոյր:
15. Աղեքսանդրաբնակ Օրիորդ Անիցա Ջազրեան՝ մէկ ինքնածնագործ խաչի բռնիչ:
16. Գահրիբաբնակ Կարնեցի Տիկին Ջարուհի Սէֆերեան՝ Քրիտոսի Ս. Գերեզմանին համար Լաւորի շալէ մէկ ծածկոց:
17. Գոնիացի Տիկին Նեփրիկ Թօփապալեան՝ մէկ ինքնածնագործ քրօշէ ըսնուած զբակլոյ ծածկոց:
18. Գահրիբաբնակ Կ. Պոսեցի Տիրամայր Լըռփոսիմէ Գուլումեան՝ մէկ քրօշէ ըսնուած Ս. Գլխազրի սեղանի ծածկոց և երկու խաչի բռնիչ:
19. Երուսաղէմաբնակ Տիգրանակերտցի Տիկին Ռօզա Պետրոսեան՝ մէկ ինքնածնագործ աւագ սեղանի ծածկոց:
20. Աղեքսանդրաբնակ Տարսնցի Տիկին Թագուհի Պաղտասարեան՝ ինքնածնագործ մէկ խաչի բռնիչ:
21. Եղեռացի Տիկին Մարիամ Պապլանեան՝ մէկ ինքնածնագործ քրօշէ ծածկոց զբակլոյ:
22. Այնթապցի այրի Տիկին Ջարուհի Մանուէլեան՝ մէկ ինքնածնագործ ծածկոց Ս. Գլխազրի սեղանին:
23. Տեօրիթեօլցի այրի Տիկին Սեմակիւ Զօպանեան՝ մէկ ինքնածնագործ շղարշեայ վարագոյր Ս. Աստուածածնի պատկերին ի Ս. Յակոբ:
24. Ս. Ուխտիտ միաբան հանգուցեալ Տ. Յովհաննէս վրդ. Աստուրեանի թղտնէն մէկ ձեռաց խաչ, մէկ ոսկի մասնատուփ և մէկ կարպետ 3,55 X 1,60 մէզր մեծաթեամբ, Վերջինս Ս. Յարութեան տանարին յատկացուած:
25. Երուսաղէմացի Օրիորդ Մարիամ Սըվանեան՝ ինքնածնագործ երկու ժամարարի ստանագորգ՝ Սրբոց Յակոբեանց և Ս. Լընչուակապետաց տանարներուն համար, և մետաքսեայ կտորներով կարուած մէկ վարագոյր Ս. Ծննդեան տանարի Անուանակելութեան սեղանին համար:

Լուսարարպետ
ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ